**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

---

ք. Երևան 17.03.2022թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
## թիվ ՍՑ-LO-2022/71

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ֆ. Մանգյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Մոնումենտ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Մոնումենտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Օհանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/32» գնանշման հարցում, ապրանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԳՀԱՊՁԲ-21-9/32-4»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 15.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2609-2022 գրությամբ «Մոնումենտ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 08.02.2022թ.-ի թիվ ՊՆ/02/587-2022 գրության հիման վրա, 15.02.2022թ.-ին «Մոնումենտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 15.02.2022թ.-ին:

15.02.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-LO-2022/71 համարի ծածկագիրը:

24.02.2022թ.-ին, 04.03.2022թ.-ին, 11.03.2022թ.-ին և 17.03.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 11.03.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 17.03.2022թ.-ին:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 08.02.2022թ.-ի թիվ ՊՆ/02/587-2022 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

*«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և ստորև ներկայացված կազմակերպության միջև կնքված գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 04.02.2022թ. դրությամբ, միակողմանի ամբողջությամբ լուծել է՝ «Մոնումենտ» ՍՊԸ-ի միջև 18.10.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-9/32-4 ծածկագրով գնման պայմանագիրը:*

*Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 04.02.2022թ. միաժամանակ ուղարկվել է մասնակցի պաշտոնական*

*էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.procurement.am (www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում:»:*

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/32» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Մոնումենտ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

**3. «Մոնումենտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

Բողոքներ քննող անձը 16.02.2022թ.-ին գրությամբ դիմել է «Մոնումենտ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2609-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը 02.03.2022թ.-ին ներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

*«18.10.2021 թ.-ին ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Մոնումենտ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև, կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-21-9/32-4» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրով Ընկերությունը պարտավորվել է մինչև 10.11.2021 թ.-ը Պատվիրատուին մատակարարել 1000 «Մերոպենեմ 500մգ» և 600 հատ «ապիպարացիլին, տազոբակտամ 4000մգ+500մգ» (այսուհետ՝ Ապրանքներ): 04.02.2022թ.-ին gnumner.am կայքէջում (այսուհետ՝ Տեղեկագիր) հրապարակված, ծանուցման համաձայն՝ Պատվիրատուն Պայմանագիրը միակողմանի լուծել է այն պատճառաբանությամբ, որ Պայմանագրով սահմանված ապրանքները չեն մատակարարվել: Մինչդեռ 20.12.2021 թ.-ին թիվ U1853643238 հաշիվ ապրանքագրի հիման վրա Ապրանքները մեր կողմից մատակարարվել են Պատվիրատուին հետևյալ հասցեով՝ ՀՀ, ք. Աբովյան, Արզնու խճուղի: Սակայն Պատվիրատուն նույն օրը այդ Ապրանքները վերադարձրել է պատճառաբանելով, որ Ապրանքները գրանցված չեն ՀՀ գրանցված դեղերի պետական գրանցամատյանում*

*(այսուհետ՝ Գրանցամատյան): Հարկ է նշել, որ Ապրանքները Գրանցամատյանում գրանցված չլինելու հանգամանքը Պատվիրատուին հայտնի է եղել Պայմանագիրը կնքելու պահից, քանի որ տվյալ գնման ընթացակարգը տեղեկագրում հայտարարելու և Պայմանագիրը կնքելու պահին Ապրանքները Գրանցամատյանում գրանցված չէին: Չնայած նրան, որ Ապրանքները Գրանցամատյանում գրանցված չեն՝ դրանք ներմուծվել են Հայաստանի Հանրապետություն օրինական ճանապարհով, որի վերաբերյալ առկա է ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրված 17.11.2021 թ.-ին տրված թիվ 25697-21 ներմուծման հավաստագիր (այսուհետ՝ Հավաստագիր), ավելին՝ այդ Ապրանքները ներմուծվել են Հայաստանի Հանրապետություն հենց Պայմանագրով սահմանված մատակարարումն իրականացնելու համար, քանի որ Ապրանքների ներմուծման հավաստագիրը ստանալու համար հիմք ծառայած փաստաթղթերից մեկը եղել է մեր կողմից ՀՀ առողջապահության նախարարություն ներկայացված Պայմանագիրը:*

*Ամփոփելով վերոգրյալը կարող ենք փաստել, որ մինչև Պայմանագաիրը միակողմանի լուծելը Ընկերությունը Պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները, սակայն Պատվիրատուի գործողությունների պատճառով չի հաջողվել այդ գործընթացը հասցնել իր տրամաբանական ավարտին:»:*

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 50-րդ հոդվածով՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Մոնումենտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-ԼՕ-2022/71 ծածկագրով ընթացակարգը:

Մասնակիցը Մասնակցի կողմից 09.03.2022թ.-ին ներկայացված մեկ այլ գրությամբ, վերջինս հավելել է հետևյալը.

*«Ձեր վարույթում է գտնվում N ՍՑ-ԼՕ-2022/71 ծածկագրով ընթացակարգը: Որի վերաբերյալ ներկայացրել ենք գրավոր դիրքորոշում, սակայն հաշվի առնելով, որ ի հայտ են եկել նոր հանգամանքներ Ձեզ ենք ներկայացնում դիրքրոշման սույն լրացումը: Մասնավորապես՝ 20.12.2021 թ.-ին մատակարարված «մերոպենեմ» դեղը Ընկերության կողմից Պատվիրատուին մատակարարվել է թերրի՝ 1000 հատի փոխարեն մատակարարվել է 400 հատ: Հարկ է նշել, որ անգամ այս դեպքում Պատվիրատուն մինչև Պայմանագիրը միկողմանի լուծելը պետք է առաջնորդվեր Պայմանագրի 2.1.2 կետի «բ» պարբերությամբ և*

*Ընկերությանը տրամադրեր ապրանքը փոխարինելու ողջամիտ ժամկետ, ինչը չի կատարվել, որի արդյունքում կարող ենք արձանագրել, որ «մերոպենեմ» դեղի մասով Պայմանագիրը լուծելով Պատվիրատուն խախտել է Պայմանագրի 2.1.2 կետի «բ» և 2.1.7.1 կետի «ա» պարբերությունները ու սխալ է կիրառել Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» պարբերությունը:*

*Կից ներկայացնում ենք.*

*- Tazin և Menem դեղերի ներդիրների պատճենները, որոնք ապացուցում են, որ Tazin դեղի ազդող նյութերն են «պիպերացիլին, տազոբակտամ»-ը իսկ Menem դեղի ազդող նյութն է «մերոպենեմ»-ը: Որտեղից երևում է, որ նշված դեղերի ազդող նյութերը նույն են ինչ Պայմանագրով սահմանվածը:*

*- Ա1540459955 և Ա4407918528 հաշիվ ապրանքագրերի պատճենները, որտեղից երևում է, որ Պայմանագրով սահմանված դեղորայքը ներկրող «Վիոլետա բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն այդ դեղերը վաճառել է «Մոնումենտ» ՍՊԸ-ին:*

*- ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԷՄԻԱ ԳԱԲՐԻԵԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴԵՂԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի կողմից տրված թիվ 25697-21 փորձագիտական եզրակացությունը, որտեղից երևում է, որ Tazin և Menem դեղերից կատարվել է նմուշառում:»:*

**4. <u>ՍՑ-LO-2022/71 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Մոնումենտ» ՍՊԸ-ի միջև 18.10.2021թ.-ին կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-21-9/32-4» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 2021թ.-ի 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 10.11.2021թ.-ը:

iv. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 04.02.2022թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ՊՆՏ/2-159 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մոնումենտ» ՍՊԸ-ի միջև 18.10.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-9/32-4 ծածկագրով գնման պայմանագրի համաձայն՝ վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2021թ. 4-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել նեքոհիշյալ ցանկի ապրանքատեսակները նշված քանակներով՝

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | Չ/Մ | Քանակ | Մատակարարման ժամկետը | Չմատակարարված քանակ |
|---|---|---|---|---|---|
| 17 | Մերոպենեմ (մերոպենեմի տրիհիդրատ) meropenem (meropenem trihydrate) | հատ | 1000 | 2021 թ. 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 10.11.2021 թ.. | 1000 |
| 39 | Պիպերացիլին (պիպերացիլին ի նատրիում), տազոբակտամ (տազոբակտամի նատրիում) piperacillin {piperacillin sodium), tazobactam (tazobactam sodium) | հատ | 600 | 2021թ. 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 10.11.2021թ. | 600 |

Հաշվի առնելով վերը նշված ցանկով նախատեսված քանակների մասով ապրանքների չմատակարարաման փաստը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 04.02.2022թ.-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է Պայմանագիրը:

## 5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2609-2022 գրությամբ «Մոնումենտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն

օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի

պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 2-րդ բաժնի համաձայն՝

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Վերոնշյալ նորմերի համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել

մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մոնումենտ» ՍՊԸ-ի միջև 18.10.2021թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-21-9/32-4» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 2021թ.-ի 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 10.11.2021թ.-ը:

www.gnumner.am համացանցային կայքում 04.02.2022թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ՊՆՏ/2-159 ծանուցման համաձայն՝ Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը, միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա՝ Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մոնումենտ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2609-2022 գրությամբ «Մոնումենտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/71 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Մոնումենտ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**
**ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝** **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**